

ծունէութեան և Թէոզոսի վանքին վերաբերութեամբ կատարուած շինարար աշխատանքին մէջ:

4. Հայազգի Սոփրոնիոսի իւրակերտ մայր եկեղեցին.

Մենք տեսանք արդէն թէ ԺՆ. դարուն կործանուած էին Թէոզոսի վանքին եկեղեցիները եւ ուրիշ հաստատութիւնները. աւերակի կոյտ մը դարձած էր ան եւ վերջին ժամանակները միայն սրտցաւ միաբաններ ձեռնարկած են կործանումէ ազատ մնացած Ս. Աստուածածնի մայր եկեղեցւոյ չորս պատերն և եկեղեցին իր ամբողջութեամբ կառուցուածքի հին սճոյն վերաշինել, բայց գործը երեսի վրայ մնացած է նիւթական պատճառներով:

Այս կիսականգուն եկեղեցին անտարակոյս հայազգի Սոփրոնիոսի շինել տուածն է, զոր կը յիշատակէ իր կենսագիրը: Սոյն եկեղեցիին ճարտարապետական յորինուածքէն յայտնի է թէ հայու ձեռքով շինուած է, ճարտարապետը հայ մըն է, ի՞նչպէս. — արդէն վերի թարգմանուած հատուածէն տեսանք, պատմականօրէն յայտնի է հայազգի Սոփրոնիոսի յաջորդութիւնը՝ Թէոզոսի վանքին վանահայրութեան, եւ անոր առատաձեռնութեամբ նոյն մայր եկեղեցւոյն շինութիւնը. Սոփրոնիոսի նման Հայաստանցի մը պիտի փափաքէր որ իր ձեռակերտը ըլլար հայեցի, հայաչէն. ուստի այն ճարտարապետական ոճը՝ զոր տեսած էր իր հայրենիքին՝ Սերաստիոյ մէջ, պիտի մշտնջենաւորէր իր վանքին մէջ ալ: Անշուշտ այս բացատրութիւնը շատ համոզիչ պիտի չը թուէր, եթէ աւելի զօրաւորագոյն փաստ մը կամ գիտական ապացոյց մը ի ձեռին չունենայինք. այդ փաստը կը հայթայթէ մեզ Աւստրիացի գիտնական մը՝ J. Strzygowski: Ան 1901 ին Երուսաղէմ եկած, այցելած է մեր վանքը. տեսակցած է հանգուցեալ Վեհապետեան Յարութիւն պատրիարքին հետ. տեսած է Ս. Յակոբեանց վանքին ձեռագրաց մատենադարանը եւ հիացում յայտնած է վանքին և անոր հնութեանց մասին. յիշեալ գիտնականը անտարակոյս այցելած է նաև Թէոզոսի վանքը և ուսումնասիրութեան համար գրի առած է նոյն վանքին յատակագիծը, զոր զետեղուած կը տեսնենք «Հայկական ճարտարապետութեան» վերաբերեալ իր մէկ գերմաներէն հոյակապ ուսումնասիրութեան մէջ (էջ 502), զոր հրատարակած է 1918ին,